ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

ԱՌԱՐԿԱ՝ ԱՆԳԼԵՐԵՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՍՈՆԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՇԱՄԲԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԴՈՆԱՐԱ ԱՍՐՅԱՆ

2023

Բովանդակություն

Ներածություն.....3

Գրական ակնարկ.....4

Որտեղ են ամրագրվում մանկավարժի իրավունքներն ու պարտականությունները 6

Մանկավարժական աշխատողների իրավունքներն ու պարտականությունները (Գլուխ 5 հոդված 27) 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 17

Օգտագործված գրականության ցանկ 20

Ներածություն

Ժամանակակից հասարակության խորքային վերափոխումները, սոցիալ-մշակութային առաջնահերթությունների փոփոխությունը, կրթության նպատակի և բովանդակության փոփոխությունը պահանջում են ուսուցիչից վերակողմնորոշել իր գիտակցությունը մանկավարժական գործունեության հետազոտական բնույթին: Ժամանակակից կրթական միջավայրը «ստիպում» է ուսուցիչներին գիտական դիրքերից ընկալել սեփական գործունեությունը, տիրապետել գիտահետազոտա կան գործունեության հմտություններին: Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է: Ուսուցչի գործունեությունն ուղղված է անձնավորության ձևավորմանը և զարգացմանը, ինչն իրականացվում է ուսումնական գործընթացի ընթացքում: Ուսուցչի գերխնդիրն ու առաքելությունը մարդկային էության բացահայտումն է, հոգու կառուցումը: Հասարակության կողմից կրթական համակարգին ներկայացվող պետական պատվերը՝ ֆիզիկապես և հոգեբանորեն առողջ սերնդի ձևավորումն է, որի իրականացնողը հենց ուսուցիչն է: Այս առումով անգնահատելի է ուսումնական գործընթացում սովորողի հետ տարվող ճիշտ ու համակողմանի աշխատանքը, որն անկյունաքարային է ու կարևոր անձի հետագա կենսագործունեության համար: Մի չնչին բացթողումը, մեթոդի կամ հնարի սխալ ընտրությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ սովորողի հոգեկերտվածքի, ընկալումների, առհասարակ բնականոն զարգացման վրա: Այս գործընթացը իրականացնելու համար կարևորվում են մանկավարժի իրավունքների ու պարտականությունների իմացությունը:

Հետազոտության թեմայի արդիականությունը:

Սույն հետազոտության արդիականությունության համար հենքն է հանդիսանում սովորողի կրթության ու դաստիարակության իրավունքը և այդ իրավունքի իրացման ճանապարհին կարևորվում են մանկավարժի իրավունքներն ու պարտականությունները, որի ճիշտ դրսևորման արդյունքում մանկավարժի կողմից կատարված աշխատանքը դառնում է արգասաբեր, հաջողություններով ու հաղթանակներով լի:

Հետազոտության խնդիրը:

Սահմանել այն եղանակներն ու ձևերը, որոնց շրջանակներում թույլատրելի է մանկավարժի և սովորողի միմյանց փոխօգնելով ու փոխլրացնելով, նպաստեն, որ ուսումնական գործընթացում սովորողն ունենա գիտակցված մոտեցումներ, առաջադիմի, ունենա կրթական չափորոշիչների վերջնարդյունքներին համապատասխան գիտելիք, հմտություններ ու կարողություններ:

Գրական ակնարկ

Մանկավարժական գործունեությունն ուսուցչից պահանջում է գիտելիքների և մասնագիտական կարողությունների անընդհատ բարելավում: Այդ նպատակին է ուղղված այս հետազոտական աշխատանքը, որը կոչված է նպաստելու ներկա կրթական բարեփոխումների ժամանակաշրջանում մանկավարժի իրավունքների և պարտականությունների դերի մասին: Ուսուցիչների մասնագիտական զարգացման և որակավորման բարձրացման հետ համընթաց փոփոխվում են նաև մանկավարժների իրավունքներն ու պարտականությունները: Մեր օրերում մեծ տեղ է հատկացվում մանկավարժական գրականության մեջ և ուսուցման ժամանակակից տեսություններում արծարծվող այն հարցերին, որոնք նվիրված են հատկապես ուսուցման արդյունավետ պայմանների մշակմանը և ուսումնական գործընթացը դրանցով ապահովելուն, ուսուցման անհատական և տարբերակված մոտեցումներին, սովորողների տարիքային, հոգեբանական, գենդերային, էթնիկ, ռասսայական և անհատական հոգեբանական առանձնահատկություններին: Քանի որ ուսուցման ցանկացած գործընթաց ինքնատիպ է ու անկրկնելի, ապա այդ ուսումնասիրություններում տեղ գտած ուսուցման տեսական հարցերը, ավանդական և ժամանակակից ձևերն ու մեթոդները չեն կարող տալ արդյունավետ դասավանդման պատրաստի դեղատոմսեր, բայց կարող են նախանշել ուսուցման արդյունավետ պայմանների բաղադրիչները և միջոցները, դրանք ուղղել դեպի սովորողները, նրանց գիտելիքների, կարողությունների, հմտությունների

զարգացմանը և անձի ձևավորմանը: Մանկավարժի համար պետք է առաջնային լինի աշակերտների մոտ զարգացնել առարկայական և սովորելու կարողունակությունները, ապահովել շարունակական աճ և զարգացում, ծանոթացնել կրթության բնագավառում իրենց դերին և գործունեությանը: Ծանոթացնել նորագույն կրթական տեխնոլոգիաներին, դասավանդման ժամանակակից մեթոդներին և հնարներին, նպաստել դրանց կիրառմանը, ծանոթացնել առարկային և դրանից բխող պահանջներին: Մանկավարժը պետք է կարևորի դասընթացը ճիշտ կազմակերպելու անհրաժեշտությունը, նպաստի աշակերտներիների ինքնադրսևորման շարունակական զարգացման գործընթացին, նրանց մեջ ձևավորի պատկերացումներ ժամանակակից չափորոշչային և ծրագրային պահանջների վերաբերյալ, ձևավորի կոնկրետ ուսումնական խնդիրներ լուծելու հմտություններ, նպաստի աշակերտի կողմից ուսուցման գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հաճախակի կիրառմանը, խթանի ուսումնական նյութեր մշակելու, դասեր վերլուծելու,կարծիք հայտնելու և ընդհանրապես խոսելու, արտահայտվելու կարողությունների զարգացմանը: Ակնկալվող արդյունքները ըստ թեմայի կայանում է նրանում , ու մանկավարժը պետք է իմանա հանրակրթության պետական չափորոշչի (ՀՊՉ-ի) հիմնական դրույթները, դրանից բխող պահանջները, առարկայական չափորոշիչը, ծրագիրը, դասավանդման մեթոդիկան և գնահատման համակարգը, տարիքային և մանկավարժական հոգեբանության առանձնահատկությունները տվյալ առարկայի ուսուցման գործընթացում, կարողանա ստեղծել հարգանքի և փոխըմբռնման վրա հիմնված բարենպաստ կրթական միջավայր, հաստատի հաղորդակցման ազատ ու բարեկիրթ մթնոլորտ սովորողների, նրանց օրինական ներկայացուցիչների (ծնողների, խնամակալների), գործընկերների հետ՝ պաշտպանելով սովորողի իրավունքները՝ համակարգելով և մեկնաբանելով ներկայացնի և վերլուծի տեղեկույթը, օգտագործի իր ձեռքբերումները ուսուցման գործընթացում, սովորողների մեջ ձևավորի ուսման նկատմամբ հետաքրքրություն և սովորածը գործնականում կիրառելու հմտություններ, դ) նպաստի սովորողների մեջ ինքնակառավարման և նախաձեռնողական կարողությունների զարգացմանը, պլանավորի իր գործունեությունը և սահմանի ուսումնական նպատակներ՝ հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները, դասավանդման գործընթացում արդյունավետորեն ներառի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին, կայացնի արդարացի որոշումներ տարբեր իրավիճակներում, կիրառի դասավանդման առավել արդյունավետ տեխնոլոգիաներ՝ ապահովելով տարբերակված ուսուցման կազմակերպում, կանխատեսի և գնահատի սովորողի և սեփական գործունեությունը, վերլուծի և կատարի անդրադարձ (ռեֆլեքսիա), ապահովի

հետադարձ կապ, կիրառի գնահատման տարբեր ձևեր, համագործակցի գործընկերների հետ, կատարի փոխադարձ դասալսումներ, վերլուծի և ընդհանրացնի դրանք՝ փորձի փոխանակման, ներդրման ու տարածման արդյունավետության բարձրացման նպատակով, շարունակաբար, այդ թվում՝ ինքնակրթության միջոցով, կատարելագործի իր առարկայական ու մանկավարժական գիտելիքներն ու հմտությունները:

Որտեղ են ամրագրվում մանկավարժի իրավունքներն ու պարտականությունները

Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է, որը սահմանում է նրա պետական կառուցվածքը, կառավարման և իշխանության մարմինների համակարգը, նրանց իրավասությունները և ձևավորման կարգը, ընտրական համակարգը, քաղաքացիական իրավունքները և ազատությունը, ինչպես նաև դատական համակարգը: Սահմանադրությունն օրենսդրության հիմքն է: Պետական գործունեության տարբեր բնագավառներում սահմանադրական կարգի պահպանմանը հետևում է Գերագույն դատարանը կամ Սահմանադրական դատարանը:

Սահմանադրությունն այնպիսի նորմատիվ ակտ է, որը պետության իրավունքի ողջ համակարգի նորմերի նկատմամբ ունի բարձրագույն իրավաբանական ուժ և կոչված է կարգավորելու, մի կողմից, մարդու և հասարակության, մյուս կողմից, մարդու և պետության միջև հարաբերությունները, ինչպես նաև հենց իր՝ պետության կազմակերպման հիմունքները: Այսինքն, այն հանդիսանում է օրենսդրական համակարգի հիմքը: Սահմանադրության նորմերը պարտադիր են բոլորի համար: Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա(ՀՀ Սահմանադրություն հոդված 5):Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով(ՀՀ Սահմանադրություն հոդված 5):

Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն(ՀՀ Սահմանադրություն հոդված 6):

Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը(ՀՀ Սահմանադրություն հոդված 6):

Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով: (ՀՀ Սահմանադրություն հոդված 6)

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Հանրակրթության մասին օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության հանրակրթության համակարգի պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը, կարգավորում է հանրակրթության գործընթացին մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունները, ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի, պարտադիր հիմնական ընդհանուր կրթության և անվճար միջնակարգ կրթության հնարավորության հիմքերը:

Հոդված 4. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականությունը

1. Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:

2. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

3. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը:

4. Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

6. Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 12-ամյա միջնակարգ կրթություն:

7. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է:

8. Ուսումնական հաստատություններում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն:

Կրոնական գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

9. Հայաստանի Հանրապետությունում հանրակրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

10. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հանրակրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Հոդված 5. Հանրակրթության նպատակները և պետական քաղաքականության սկզբունքները

1. Հանրակրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը,

անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.

2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.

3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.

5) հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը.

6) ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը.

7) անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը.

8) հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը:

Քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականութ յուններ կրելու ունակությունը (քաղաքացիական իրավունակություն) բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես: Քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ:

ՀՀ հանրակրթության մասին օրենքում՝ «Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է 1»: Կարող ենք վստահաբար պնդել, որ անկախ բոլոր հանգամանքներից, երեխան պետք է ստանա որակյալ ու բազմակողմանի կրթություն: Ինչպես գիտենք, ուսումնական գործընթացի մասնակից են հավարվում սովորողը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը և ուսուցիչը: Վերջիններիս իրավունքներն ու պարտավորությունները սահմանված են օրենքով: Ուսուցչը ուսումնական գործընթացի հիմնական կազպակերպիչն ու իրականացնողն է, ով մեծագույն պատասխանատվություն է կրում սովորողի չափորոշչային վերջնարդյունքներին հասնելու համար:

Իսկ ի՞նչ իրավունքներ և պարտականություններ ունի մանկավարժը հանրակրթական ուսումնական հաստատությունում:

Մանկավարժական աշխատողների իրավունքներն ու պարտականությունները (Գլուխ 5 հոդված 27)

1. Մանկավարժական աշխատողն իրավունք ունի՝

1) մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով.

2) ընտրելու և ընտրվելու համապատասխան պաշտոններում և կառավարման համապատասխան մարմիններում.

3) մասնակցելու ուսումնական հաստատության գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը.

4) բողոքարկելու ուսումնական հաստատության ղեկավար մարմինների հրամանները, որոշումները և կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

5) առաջարկներ ներկայացնելու առարկայական չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի բարելավման վերաբերյալ.

6) օգտվելու ուսումնական հաստատության գրադարանի, տեղեկատվական պահոցների ծառայություններից՝ ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան.

7) ընտրելու և կիրառելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ՝ իր ընտրությամբ օգտագործելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած դասագրքեր և ուսուցողական նյութեր, ձեռնարկներ և սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդներ.

8) պաշտպանված լինելու սովորողների, մանկավարժական և այլ աշխատողների այնպիսի գործողություններից, որոնք նսեմացնում են իր մասնագիտական վարկանիշն ու արժանապատվությունը.

9) ունենալու կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ մասնագիտական գործունեություն իրականացնելու համար.

10) իր շահերի պաշտպանության նպատակով ստեղծելու կազմակերպություններ, արհմիություններ կամ անդամակցելու դրանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

11) հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան՝ մշակելու և իրականացնելու դասապլաններ, թեմատիկ միավորներ.

12) մասնակցելու վերապատրաստումների, գիտաժողովների, քննարկումների և լսումների.

13) դիմելու արտահերթ ատեստավորվելու կամ որակավորման համապատասխան տարակարգ ստանալու համար.

14) օգտվելու օրենքներով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված իրավունքներից, լիազորություններից և խրախուսման ձևերից:

Մանկավարժական աշխատողը պարտավոր է՝

1) հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը.

2) նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները.

3) նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը.

4) ապահովել հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ.

5) հետևողականորեն կատարելագործել իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ.

6) համագործակցել ծնողների հետ երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում.

7) համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.

8) պահպանել ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

9) սովորողների մեջ ձևավորել պատշաճ վարքագիծ ու վարվելակերպ, դաստիարակել հայրենասիրություն.

10) սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ:

3. Մանկավարժական աշխատողների համար ուսումնական հաստատության, նրա հիմնադրի, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր:

Մանկավարժական աշխատողների համար ուսումնական հաստատության, նրա հիմնադրի, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր:

Կրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ զարգացման առաջնայնությունը, աշխատասիրության, հանդուրժողականության, քաղաքացիական գիտակցության, անհատի եւ նրա իրավունքների ու ազատության նկատմամբ հարգանքի, հայրենասիության, օրինապահության, պետական շահերի գերադասելիության, շրջակա միջավայրի եւ բնության նկատմամբ սիրո ձևավորումը:

2) հանրակրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը եւ համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին,

ՀՀ Հանրակրթության մասին օրենք, հոդված 4, կետ 2: 6 համագործակցելու, սովորողին վերահսկելու ու առաջնորդելու գործառույթը: Սովորողի կրթական կարիքների հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության հիմքում պետք է դրված լինեն ընդհանուր հետաքրքրություններն ու նպատակները: Այդ փոխհարաբերությունների հիմքում պետք է դրվեն միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքները: Նման միջավայրի ապահովումը կարող է խթանել ուսուցիչի աշխատանքի

արդյունավետությունը, քանի որ ծնողների հետ համատեղ ջանքերով կարելի է հասնել սովորողի՝ ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողունակությունների անցնցում ձևավորմանը

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, հիմք ընդունելով հետազոտության ընթացքում կատարած մեր պնդումները՝ կատարենք մի քանի արձանագրումներ.

- Մանկավարժը՝ որպես ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչ և պատասխանատու, զարգացնում է սովորողների ակտիվությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը՝ սորտորեն համագործակցելով սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների հետ:
- Մանկավարժը ը պարտավոր է սովորողի զարգացման ընթացքի վերաբերյալ տեղեկություն տալ սովորողի ծնողին կամ օրինական ներկայացուցիչներին՝ակնկալելով նրանցից հետադարձ կապ:
- Մանկավարժն ու սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը պետք է սովորողի ուսուցման և դաստիարակության գործընթացների վերաբերյալ որոշումներ ընդունեն համատեղ:
- Դպրոց-ընտանիք համագործաքցության առանցքում պետք է դրվեն բացառապես սովորողի շահերը:

Ներդնել սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների, նրանց առաջադիմության գնահատման ժամանակակից ձևեր՝ կիրառելով բազմապիսի գնահատման գործիքներ, այդ թվում՝ թեստեր, շարադրություններ, խմբային աշխատանքներ, նախագծերի մշակում և իրականացում, հարցազրույցների վարում, ինքնագնահատում և փոխադարձ գնահատում և այլն, որոնք կնպաստեն սովորողի կարողությունների և ընդունակությունների բազմակողմանի դրսևորմանը:

Ուսումնասիրելով համապատասխան գրականություն և կատարելով որոշակի հետազոտություն՝ ևս մեկ անգամ ընդգծում ենք մասնագիտական կողնորոշման անհրաժեշտությունը և դրա բացակայության պայմաններում հնարավոր բացասական հետևանքները ինչպես անձի, այնպես էլ հասարակության համար: Մանկավարժը իր գործունեությունը տարածում է բոլոր այն ոլորտներում, ուր առկա է սոցիալականացման այս կամ այն խնդիրը և իր աշխատանքներով նպաստում է դրանց հարթմանը, կարգավորում՝ ապահովելով նորմալ ընթացք: Այսօր ամբողջ աշխարհում նկատվում է ագրեսիվ մթնոլորտի աճ: Դա վերաբերում է ոչ միայն ազգամիջյան հարաբերություններին, այլև առանձին մարդկանց հարաբերություններին:Ժամանակակից համաշխարհային խնդիրը չի շրջանցել նաև դպրոցական կյանքը: Ներկա հրապարակումներում հաճախ է բարձրացվում դպրոցում կոնֆլիկտների հարցը: Նրանց աղբյուրը, որպես կանոն, երեխայի անձի նկատմամբ մանկավարժի հետաքրքրության անկումն է, նրա ներքին աշխարհը հասկանալու չկամությունը: Խնդրահարույց և կոնֆլիկտային իրավիճակների առաջացումը պայմանավորված է նաև հասարակության մեջ մանկավարժական մասնագիտության հեղինակության անկմամբ, դպրոցական կառավարման ավտորիտարությամբ, դպրոցական հասարակության միջանձնային հարաբերություններում աճող լարվածությամբ: Ոչ այնքան հազվադեպ կոնֆլիկտները ուղեկցվում են բռնությանմբ . դրանցից որոշները կարող են շատ ցավալի լինել ինչպես ուսուցչի, այնպես էլ երեխայի համար :Ժամանակակից երեխաները սկսեցին տարբերվել անտարբերությամբ իրենց շրջապատող մարդկանց նկատմամբ, կամ հազվադեպ դաժանությամբ, այնպիսի դաժանությամբ, որի պատճառով մանկավարժը միշտ չէ, որ կարող է ազդել նրանց վրա, քանի որ նման երեխաների համար ուսուցիչը չէ այն մարդը, ում պետք է հարգել: Այդ իսկ պատճառով հաջող հանգուցալուծված կոնֆլիկտը իր հեղինակությունը բարձրացնելու միջոցներից մեկն է, և ոչ միայն:Այս իրավիճակը կարող է դրական ազդեցություն ունենալ երեխայի վրա, խորը արձագանք թողնել նրա վրա և ստիպել վերանայել իր աշխարհայացքը:Դաժան վերաբերմունքի խնդիրը վերջին ժամանակներս արդիական է նաև տարրական

դպրոցի համար, հատկապես, որտեղ պետք է ընթանա ապագա մարդու անձի ձևավորումը, և այդ ամենի մեջ գլխավոր Արարիչը ուսուցիչն է: Շատ կարևոր է, որպեսզի կարողանանք կանխել կոնֆլիկտները և ճիշտ լուծել դրանք: Ուսուցիչների և աշակերտների արդյունավետ շփման և երեխաների միջև հաղորդակցման գործընթացի կազմակերպման կարևորագույն պայման է ուսուցչի սոցիալ-հոգեբանական կոմպետենտությունը: Առաջնորդվելով միջանձնային հարաբերությունների հումանիստական սկզբունքներով, երեխաների հետ փոխգործակցության ընթացքում ուղղորդվելով համագործակցության ռազմավարությամբ ՝ ուսուցիչը սահմանում է հաղորդակցման որոշակի միջոցներ: Երեխաների հետ անհատական – կողմնորոշված փոխգործակցությունը, որը տեղի է ունենում մանկավարժի և երեխայի համագործակցության շրջանակներում, հիմնված երեխայի անձի ընկալման, ընդունման և հարգանքի վրա, առաջացնում է վստահություն և անձնական նշանակություն, որոնք օգնում են սովորողին դառնալ ավելի ինքնավստահ և ունակ կյանքի դժվարությունները հաղթահարելու: Երեխան հնարավորություն է ստանում ավելի ադեկվատ գնահատել երևույթները, շրջակա իրականութունը և համարժեք արձագանքել դրանց, ինչը հեշտացնում է փոխազդեցությունը շրջապատի հետ:Մանկավարժը, հանդես գալով որպես դպրոցի և երեխայի ուսումնական գործունեության” անձնավորված ” տարբերակ և ճիշտ կիրառելով իր իրավունքներն ու պարտակա նությունները ունի երեխայի վրա դրական ազդելու զգալի ներուժ, որը պետք է օգտագործի սովորողների ֆիզիկական, հոգեբանական և անձնային զարգացումը ճիշտ ուղղորդելու համար:

:

Օգտագործված գրականության ցանկ

1. www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք:

2.Համացանցային նյութեր

3. https://www.arlis.am/documentview.aspx?docID=1